Ա. ԱՌՍՏԱՄՅԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՎՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ

891.99Ս
Ա-70

ՊԵՏՀՐԱՏ

891.9915
Ա-70
ԱԿ.

Ա. ԱՌՍՏԱՄՅԱՆ

2011-05

ՄԱՆԿԱԿԱՆ ՎՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ

Նկարները Զ. Ալթունյանի

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1933

14 FEB 2013

Տեխ. խմբագիր՝ Սա. Ալթունյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

4787
38

Գլավլիտի լիազոր Կ—4729. Հրատ. 4377.
Գառվեր 23 Տիրաժ 5000.
Թուղթ 62×94 Տպագր. 1 մամ.
Մեկ մամ. 10920 Նիշ. Հեղինակային 08 մամ.
Հանձնված է արտադրության 17 դեկտ. 1937
Ստորագրված է տպագրության 26 հունվ. 1938
Գինը 85 կոպ.

Պետհրատի I տպարան Երևան. Լենինի փող. 65



ԼԵՆԻՆԻ ՆԿԱՐԸ

— Ռուբիկ, մի տես այս նկարը.
Գիտես ով է այս մեծ մարդը։
— Այո, գիտեմ, դա Լենինն է,
Մեր բոլորիս սիրելին է։

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Մայիսմեկյան այս վառ տոնին,
Մեր Առաջնորդ մեծ Ստալինին
Վողջույնները մեր մանկական
Ցեվ համբույրը վորդիական։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՏՈՆԻՆ

Ուռա՛, ուռա՛, տոնն է այսոր
Խորհրդային, կարմիր, հրգոր
Մեր բանակի—
Մեր պահակի։
Վոր մեծանանք
Պիտի դառնանք
Արթուն պահակ
Հայրենիքի։

ՀՐԱՁԻԿԻ ՆԱՄԱԿԸ

Բարև՛, բարև՛, անուշ մայրիկ,
Մարտի ութին, քո տոն որին
Քեզ մի պաչիկ։
Քո՝ Հրաչիկ։



ՏՐԱՄՎԱՅԸ

Տիկ-տակ, տիկ-տակ, տիկ...
Փոքրիկ աղջիկ, Քնարիկ,
Հեռու փախիր իմ ճամբից—
Իմ յերկաթե զուլդ գծից։

Յես գընում եմ կայարան,
Վոր յետ դառնամ Աբովյան։
Թե հոգնել ես, բալիկս,
Նստիր՝ տանեմ, ջանիկս։



ԱՎՏՈՆ

Տու՛-տու՛-տու՛-տո՛ւ, ճամբա՛տո՛ւ
Ր՞նչ՞ես կանգնել, Թամա՛ր-դո՛ւ։
Յես ավտոն եմ, տու՛-տու՛-տո՛ւ,
Բեռ եմ տանում Ղամարլու։

Զմոռանա՛ք, յերեխե՛ք,
Հենց վոր տու՛-տո՛ւ դուք լսե՛ք,
Ճանապարհից հեռացե՛ք՝
Ավտոյի տակ չընկնե՛ք։

ՍԱՌՈՒՅՑԸ

Սուրիկ, Սուրիկ, մի տես, մի տես,
Գետը սառուց է կապել,
Ապակու պես հարթ է դարձել,
Մ՛ի մի սահնակ՝ նստես,
Քշես...

ՏՈՆԱԾԱՌ

Տոնածառ, դու մի ծառ,
Քո շուրջը մենք հազար.
Դու յեկար գիշերով
Զարդերով, լույսերով։

Մեզ բերիր նվերներ,
Միրունիկ տիկնիկներ։
Ուրախ ենք քո գալուն,
Բարևներ նոր տարուն։

ԱՌԱՋԻՆ ԾԱՂԻԿԸ

Դաշտերում, վաղ գարնան,
Ժրպտում է քնքուշիկ
Սպիտակ մի ծաղիկ,
Անունը՝ ձնծաղիկ։

ՀԵՅ ՋԱ՛Ն, ՀԵՅ ՋԱ՛Ն...

Գիտեմ դանակ, գդալ բռնել,
Պատառաքաղել գործածել.
Հեյ Ջան, հեյ Ջան...
Ունեմ պատիկ անձեռոցիկ,
Վրան թելով գրած՝ Սերժիկ։

ԾԻՏԻԿՆԵՐԸ

Ցուրտ ձմեռն է, բուք-բորան,
Ծիտիկները մեր սառան.
Մայրիկ, կուտ տուր ծաերին,
Ձկոտորվեն ես ցրտին։



ՈՒԼԻԿԸ

Ուլիկ ունեմ՝ սիրուն, կայտառ.
Յեթե խոտ տաս կցատկոտի.
Բայց թե հանկարծ քեֆին դիպար,
Մբկրկալով դես-դեն կընկնի։



ԳԱԶԱՆԱՆՈՑՈՒՄ

Տես, ես հիմար կապիկին տես
Վանց ե նայում, ծաղրում, կարծես։
Ինչ վոր անես՝ կկրկնի,
Ասես՝ խելառ մայմուն լինի։

ՄՈՒԿԻԿԸ

Տես, մուկիկը,
Ճըստ-վըստիկը
Չի վախենում փիսիկից։

Վազվըզում է,
Ծըփծըվում է,
Ասես՝ քաջ է բոլորից։

Դեռ չըգիտի,
Վոր ճանկն ընկնի,
Եվ չի պրծնի նրանից։

ՀՀ Ազգային գրադարան
NL0399278

ԳԻՆԸ 85 կ

6905

А. АРСТАМЯН

ДЕТСКИЕ СТИХОТВОРЕНИИ

ГИЗ АРМ. ССР, ЕРЕВАН